գր 1 03.04.2015թ
կալ 11715118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«01» ապրիլի 2015թ

ՀՐԱՄԱՆ

№ 67 - Ձ

ՊԵՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԴՈՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ և 10-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 216-Ն որոշման 1-ին կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 216-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում դիմում-հայտերի և գերատեսչական տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2015 թվականի ապրիլի 9-ը՝ ժամը 18:00:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված դիմում-հայտերը և գերատեսչական տեղեկանքները ներկայացվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի օգոստոսի 29-ի N 232-Ն հրամանի 1-ին և 2-րդ հավելվածների:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

<01> ապրիլի 2015թ
Ք. Երևան